ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՎ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ ԱՄԱՎԵՐՋՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հուլիսի 2-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի (Աստվածաբանական համալսարան) և Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի ամավերջյան հանդիսությունը, որն սկսվեց ՀՀ օրհներգով և Ճեմարանի քայլերգով:

Այնուհետև Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 2007-2008 թթ. ուսումնական տարվա ամփոփիչ հաշվետվությամբ հանդես եկավ Ճեմարանի տեսուչ Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը: Այսօր Գևորգյան Ճեմարանում ուսանում են 114 սաներ, որոնցից շրջանավարտ 38-ը կհամալրեն Մայր Աթոռի միաբանության շարքերը: Տեսուչ Հայր Սուրբը նշեց, որ ուսումնական գործընթացն անցել է առանց խոչընդոտների, ճեմարանականներն այցելել են բազմաթիվ մշակութային հաստատություններ, թղթակցել զանազան թերթերի և ամսագրերի, կազմակերպվել են ուխտագնացություններ և քննարկումներ տարբեր հարցերի շուրջ: Նա անդրադարձավ Ճեմարանի ձեռքբերումներին և առկա խնդիրներին՝ հույս հայտնելով, որ շրջանավարտ 38 ճեմարանականներն այսուհետ իրենց անսակարկ ծառայությունը կբերեն Հայ Առաքելական Եկեղեցու անդաստանում՝ օգտագործելով ճեմարանում ամբարած իրենց գիտելիքներն ու հոգևոր փորձառությունը:

Տարեկան հաշվետվությամբ հանդես եկավ նաև Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ Տ. Գևորգ աբեղա Սարոյանը: Այսօր դպրանոցում ուսանում են 63 սաներ: Հայր Սուրբն իր հաշվետու զեկույցում անդրադարձավ անցնող ուսումնական տարում ճեմարանի արձանագրած հաջողություններին և խնդիրներին: Նա ուրախությամբ նշեց, որ Ճեմարանը համալրվել է նոր դասախոսներով, ամուր կապեր են ստեղծվել ՀՀ բուհերի հետ, կազմակերպվել են հանդիպումներ անվանի մտավորականների և գիտնականների հետ, գիտաժողովներ և ուխտագնացություններ հայոց սրբավայրեր, Ճեմարանի գրադարանը համալրվել է կրոնական և օտարալեզու արժեքավոր հրատարակություններով: Տեսուչ Հայր Սուրբը նաև տեղեկացրեց, որ հրատարակվել է «Վազգենյան դպրանոց» եռամսյա պարբերականի առաջին համարը, առաջիկային լույս կտեսնի նաև Ճեմարանի երգչախմբի երկրորդ ձայնասկավառակը՝ 10 հոգևոր երգերով:

Ընկալյալ ավանդության համաձայն՝ տեղի ունեցավ նաև մրցանակաբաշխություն: Վեհափառ Հայրապետը խրախուսական նվերներ հանձնեց բարձր առաջադիմություն ցուցաբերած սաներին: Պատվոգրեր և նվերներ հանձնվեցին նաև Ճեմարանի՝ ֆուտբոլի և շախմատի մրցումներում աչքի ընկած լսարաններին և սաներին:

Վերջում ներկաներին իր գնահատանքը և օրհնությունը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց ճեմարանների տեսչություններին, դասախոսական կազմերին և պաշտոնեությանը կատարված աշխատանքների համար՝ անդրադառնալով նվիրյալ հոգևորականներ ունենալու կարևորությանը մեր ժողովրդի կյանքում:

Վեհափառ Հայրապետը նշեց, որ բազմաթիվ եկեղեցիներ այսօր հոգևոր սպասավոր չունեն, շատերը խոնարհված են և անհամբեր սպասում են նվիրյալ, հավատքով լի, ազգի բարօրությանն ու Հայրենիքի շինությանը լծված եկեղեցականների, ովքեր պիտի խանդավառեն ու մխիթարություն բերեն մեր ժողովրդի զավակներին, ովքեր մեր եկեղեցիների լույս խորաններից Քրիստոսի լույս պատգամները պիտի քարոզեն, որպեսզի դրանք դառնան մեր բարեպաշտ ժողովրդի կենցաղի և հոգեբանության հիմքը: Հայոց Հովվապետը կոչեց ճեմարանականներին ներքին ուխտ կատարելու՝ անդուլ աշխատանքով ու նվիրվածությամբ այդ կարիքը նվազեցնելու և իրավիճակը փոխելու համար:

Հանդիսությունը փակվեց Նորին Սրբության «Պահպանիչ» աղոթքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ